Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թ.
մարտի 18-ի նիստի N 10
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) բնագավառի հիմնախնդիրների, դրանց լուծումների և զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ միջոցառումների ամբողջություն է: Ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության հիմնադրույթներին համապատասխան:

2. Ծրագրի նպատակն է՝ ապահովել հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացումն ու համապատասխանեցումը հասարակության և տնտեսության արդի պահանջներին, բարձրացնել միջազգային գիտական տարածքի հետ բնագավառի ինտեգրվածության մակարդակը:

3. Հասարակական գիտությունների բնագավառն ընդգրկում է գիտական և գիտատեխնիկական գործունեության հետևյալ ոլորտները՝ ըստ Ֆրասկատիի դասակարգման.

1) հոգեբանություն,
2) տնտեսագիտություն և գործարարություն,
3) մանկավարժական գիտություններ,
4) սոցիոլոգիա,
5) իրավունք,
6) քաղաքական գիտություններ,

7) սոցիալական և տնտեսական աշխարհագրություն,

8) զանգվածային լրատվություն և հաղորդակցություն,

9) այլ հասարակական գիտություններ:

II. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

4. Հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող գիտական ծրագրերին և թեմաներին Հայաստանի Հանրապետության 2010թ. պետական բյուջեից հատկացվել է գիտության ծախսերի համար նախատեսված ընդհանուր ֆինանսավորման ծավալների մոտ 4 տոկոսը: Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում են գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 11 ծրագրեր և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 63 գիտական թեմաներ: Այդ ծրագրերը և թեմաները կատարվում են 14 գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնցից 3-ը ներկայացնում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, 10-ը՝ Կրթության և գիտության նախարարությունը, 1-ը՝ Գյուղատնտեսության նախարարությունը, ինչպես նաև «Նորավանք» հիմնադրամում, «Էթնոս» էթնո-մշակութային գիտական հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունում, ու մեկ գիտական թեմա էլ կատարվում է անհատ հետազոտողի կողմից:

5. 2010թ. տվյալներով՝ հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող մասնագետների թիվը 270 է, որոնցից 60-ն ունեն գիտության դոկտորի գիտական աստիճան, իսկ 210-ը՝ գիտության թեկնածուի: Գիտության դոկտորների միջին տարիքը 65.5 է, իսկ թեկնածուներինը՝ 47.6:

6. 1994-2009թթ. ընթացքում հասարակական գիտությունների բնագավառում Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանի վկայագիր են ստացել 1623 մարդ (գիտական աստիճան ստացածների ընդհանուր թվի մոտ 28 տոկոսը), որոնցից 2010թ. դրությամբ պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված են 194-ը կամ՝ ընդհանուրի մոտ 12 տոկոսը (տե՛ս Գծապատկեր 1):

7. Հասարակական գիտությունների բնագավառում ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ընդունվող պարբերական գիտական հրատարակությունների քանակը 2010թ. հուլիսի 1-ի դրությամբ 27 է, որոնցից 25-ը հրատարակվում են հայերեն և 2-ը՝ ռուսերեն լեզուներով:



Գծապատկեր 1. Հասարակական գիտությունների բնագավառում 1994-2009թթ. ընթացքում գիտական աստիճանի վկայագիր ստացածների (մուգ գույնի հիստոգրամներ) և 2010թ. դրությամբ դրանցից պետական բյուջեի ֆինանսավորմամբ կատարվող գիտական ծրագրերում ու թեմաներում ընգրկվածների (բաց գույնի հիստոգրամներ) թվաքանակները (մեծ գծապատկեր), ինչպես նաև վերջիններիս մասնաբաժինը ընդհանուրի մեջ (տոկոսներով, փոքր գծապատկեր)՝ ըստ Ֆրասկատիի դասկարգման ոլորտների և գիտական աստիճանի վկայագիր ստացածների թվաքանակի նվազման աստիճանի: Ոլորտների նշանակումները. 1-ինը՝ տնտեսագիտություն և գործարարություն, 2-ը՝ մանկավարժական գիտություններ, 3-ը՝ իրավունք, 4-ը՝ հոգեբանություն, 5-ը՝ սոցիալական և տնտեսական աշխարհագրություն, 6-ը՝ քաղաքական գիտություններ, 7-ը՝ սոցիոլոգիա:

8. Ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների տարեկան հաշվետվություններով ներկայացված տվյալների, հասարակական

գիտությունների բնագավառում պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտությունների արդյունքում 2008-2009թթ. հրատարակվել է 1762 գիտական աշխատություն, որոնցից 1345-ը հայերեն, 351-ը՝ ռուսերեն, 66-ը՝ այլ լեզուներով (տե՛ս Գծապատկեր 2): Դրանց մեջ ռուսերեն լեզվով հրապարակումները կազմում են 20 տոկոս, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ եվրոպական լեզուներով՝ 4 տոկոս (բնագավառի համաշխարհային հրապարակումների բացարձակ մեծամասնությունն անգլերեն է):



Գծապատկեր 2. Հասարակական գիտությունների բնագավառում 2008-2009թթ. պետական գիտական ծրագրերի և թեմաների շրջանակներում իրականացվող հետազոտությունների արդյունքում հրապարակված գիտական աշխատությունների բաշխումն ըստ հրապարակման լեզուների:

9. Հասարակական գիտությունների բնագավառում առկա են հետևյալ հիմնա-խնդիրները.

1) գիտական հետազոտությունները հիմնականում չեն արտացոլում ու անհրաժեշտ գիտական հենքով չեն ապահովում հանրապետությունում տեղի ունեցող հասարակական և տնտեսական փոփոխություններն ու զարգացումները.

2) ենթակառուցվածքները և նյութատեխնիկական բազան չեն համապատասխա-նում ժամանակակից գիտության պահանջներին.

3) թույլ են գիտական հետազոտություններ – հասարակական զարգացումներ կապերը, ցածր է տնտեսական զարգացումների գիտական հիմնավորվածության մակարդակը.

4) անբավարար է հայերեն լեզվով ժամանակակից մասնագիտական և գիտա-մեթոդական գրականության հրատարակման մակարդակը.

5) ցածր է գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության արդյունավետությունը և շարունակվում է բարձր մասնագիտական մակարդակ ունեցող կադրերի արտահոսքը.

6) գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ձևն ու բովան-դակությունը չեն համապատասխանում ժամանակակից գիտության պահանջներին.

7) ցածր է ատենախոսությունների մասնագիտական մակարդակը, դրանց թեմա-ները միտված չեն հանրապետական, տարածաշրջանային և համընդհանուր մարտա-հրավերների լուծումներին ուղղված հետազոտությունների իրականացմանը.

8) փոքր թիվ են կազմում ոլորտի համընդհանուր մարտահրավերների լուծումներին միտված ու համաշխարհային գիտական հասարակությանը հասանելի հրապարակում-ները.

9) ցածր է միջազգային համագործակցության, միջազգային գիտական տարածքի հետ ինտեգրվածության մակարդակը.

10. Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման համար ձևակերպվել են հասարակական գիտությունների զարգացման հեռանկարային նպատակակետերը և դրանց հասնելու միջոցառումները:

III. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱԿԵՏԵՐԸ

11. Հասարակական գիտությունների զարգացման հիմնական նպատակակետերն են.

1) գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ձևի ու բովան-դակության համապատասխանեցում ժամանակակից գիտության պահանջներին, կադ-րերի վերարտադրության արդյունավետության բարձրացում.

2) հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացում, ենթա-կառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացում.

3) հասարակական և տնտեսական զարգացումների մեջ կիրառվելիք գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում.

4) միջազգային համագործակցության զարգացում:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

12. Նպատակակետ 1: Հասարակական գիտությունների բնագավառում գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ձևի ու բովանդակության համապատասխանեցում ժամանակակից գիտության պահանջներին, կադրերի վերարտադրության արդյունավետության բարձրացում.

1) միջոցառումները՝

ա. բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցում ժամանակակից գիտության պահանջներին.

բ. հայերեն հրատարակվող ուսումնական ձեռնարկների, գիտամեթոդական և մասնագիտական գրականության արդիականացում.

գ. մասնագետների պատրաստման որակի բարձրացում, այդ թվում՝ դասավանդման գործընթացում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում կամ այլ կազմակերպություններում աշխատող և որակավորման բարձր աստիճան ունեցող մասնագետների ներգրավում.

դ. գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակների ներդրում, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների գիտակրթական կազմակերպություններում կամ միջազգային գիտական կենտրոններում կադրերի պատրաստման մեխանիզմների մշակում և ներդրում.

ե. գիտական կադրերի պատրաստման գործում օտարերկրյա մասնագետների ներգրավում, այդ թվում՝ ատենախոսությունների համաղեկավարության մեխանիզմների մշակում և ներդրում.

զ. ատենախոսությունների թեմաների համապատասխանեցում հասարակական և տնտեսական զարգացումների ժամանակակից պահանջներին.

է. որոշ մասնագիտությունների գծով օտարերկրյա պետությունների մասնագետների հետ ատենախոսությունների համատեղ փորձաքննության անցկացման մեխանիզմների մշակում:

13. Նպատակակետ 2: Հասարակական գիտությունների բնագավառում հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացում, ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացում.

1) միջոցառումները՝

ա. հասարակական գիտությունների հիմնադրամի ստեղծում.

բ. ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացում, ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում.

գ. հանրապետական միասնական գիտատեղեկատվական ցանցի ստեղծում, միջազգային գիտատեղեկատվական շտեմարանների ազատ օգտագործման պայմանների ապահովում.

դ. ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների համար ընդունելի հանրապետական գիտական պարբերականների մասնագիտական մակարդակի բարձրացում, այդ թվում՝ հանրապետական գիտական պարբերական հրատարակությունների արդիականացման ծրագրերի իրականացում.

ե. հասարակական գիտությունների ինդեքսավորված ամսագրերում գիտական հրապարակումների խրախուսման մեխանիզմների ներդրում:

14. Նպատակակետ 3: Հասարակական և տնտեսական զարգացումների մեջ կիրառվելիք գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում.

1) միջոցառումները՝

ա. կիրառական հետազոտությունների խթանման մեխանիզմների մշակում և ներդրում.

բ. հասարական գիտությունների բնագավառում դրամաշնորհային ծրագրերի իրականացում.

գ. տարածաշրջանի և հնարավոր գործընկեր երկրների պատմության, մշակույթի, հասարակության և քաղաքականության ուսումնասիրման, եվրաինտեգրման ծրագրերի իրականացում:

15. Նպատակակետ 4: Հասարակական գիտությունների բնագավառում միջազգային համագործակցության զարգացում.

1) միջոցառումները՝

ա. միջազգային համագործակցության զարգացման պետական միասնական ծրագրի մշակում.

բ. գիտական և գիտամանկավարժական կադրերի փոխանակման ծրագրերի իրականացում, համաֆինանսավորման սկզբունքով միջազգային համատեղ գիտական խմբերի, կենտրոնների և լաբորատորիաների ստեղծում.

գ. օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների հետ համատեղ ծրագրերի իրականացում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. ապրիլի 30-ի N 459-Ն որոշմամբ հաստատված «Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագրի» շրջանակներում:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

16. Ծրագրի ֆինասավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն.

2) արտաբյուջետային միջոցները, այդ թվում՝ դրամաշնորհները, ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների գիտական և (կամ) գիտակրթական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային գիտական կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրները:

VI. ԱՄՓՈՓՈՒՄ

17. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում հասարակական գիտությունների բնագավառի հետազոտությունները կհամապատասխանեն ժամանակակից գիտության պահանջներին, կբարձրանա դրանց մասնագիտական մակարդակն ու միջազգային գիտական և գիտակրթական տարածքի հետ ինտեգրվածության աստիճանը, և, որպես հետևանք, կբարձրանա նաև պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թ.
մարտի 18-ի նիստի N 10
արձանագրային որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ույ Ց

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/հ	Միջոցառում	Կատարման ժամկետ/ ֆինանսական ծավալ					Ֆինանսավորման աղբյուր	Կատարող
		2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.		
1	2	3	4	5	6	7	8	9
1. Հասարակական գիտությունների բնագավառում գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ձևի ու բովանդակության համապատասխանեցում ժամանակակից գիտության պահանջներին, կադրերի վերարտադրության արդյունավետության բարձրացում								
1.1	Հայերեն հրատարակվող ուսումնական ձեռնարկների, գիտամեթոդական և մասնագիտական գրականության արդիականացում	V	V	V	V	V	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)
1.2	Մասնագետների պատրաստման որակի բարձրացում, ուսումնական գործընթացում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում կամ այլ կազմակերպություններում աշխատող և որակավորման բարձր աստիճան ունեցող մասնագետների ներգրավում	V	V	V	V	V	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)
1.3	Գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակների, օտարերկրյա պետությունների գիտակրթական կենտրոններում կադրերի պատրաստման մեխանիզմների մշակում և ներդրում	V	V	V	V	V	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)

1	2	3	4	5	6	7	8	9
							միջոցներ	
1.4	Ատենախոսությունների թեմաների արդիականացման, մասնագիտական մակարդակի բարձրացման, ատենախոսությունների համաղեկավարման մեխանիզմների մշակում և ներդրում	V	V	V	V	V	-	ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)
2.	**Հասարակական գիտությունների բնագավառում հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացում, ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացում**							
2.1	Հասարակական գիտությունների հիմնադրամի ստեղծում	-	V	-	-	-	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե
2.2	Ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացման ծրագրերի իրականացում, մլն դրամ	-	10.0	20.0	30.0	40.0	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)
2.3	Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների համար ընդունելի գիտական պարբերականների արդիականացման ծրագրերի իրականացում, միջազգային ինդեքսավորված ամսագրերում գիտական հրապարակումների խրախուսման մեխանիզմների մշակում և ներդրում	-	12.0	14.0	24.0	36.0	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողով՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)
3.	**Հասարակական և տնտեսական զարգացումների մեջ կիրառվելիք գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում**							
3.1	Կիրառական հետազոտությունների խթանման մեխանիզմների մշակում և ներդրում	V	V	V	-	-	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)
3.2	Հասարակական գիտությունների բնագավառում դրամաշնորհային ծրագրերի իրականացում, մլն դրամ	30.0	40.0	50.0	70.0	90.0	ՀՀ պետական բյուջե,	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ

1	2	3	4	5	6	7	8	9
							արտաբյուջետային միջոցներ	համատեղ (համաձայնությամբ)
3.3	Տարածաշրջանի և հնարավոր գործընկեր երկրների պատմության, մշակույթի, հասարակության և քաղաքականության ուսումնասիրման, եվրաինտեգրման ծրագրերի իրականացում, մլն դրամ	10.0	20.0	30.0	40.0	50.0	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)
4. Հասարակական գիտությունների բնագավառում միջազգային համագործակցության զարգացում								
4.1	Միջազգային համագործակցության զարգացման պետական միասնական ծրագրի մշակում	V	-	-	-	-	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)
4.2	Գիտական և գիտամանկավարժական կադրերի փոխանակման ծրագրերի իրականացում, համաֆինանսավորման սկզբունքով միջազգային համատեղ գիտական խմբերի, կենտրոնների և լաբորատորիաների ստեղծում, մլն դրամ	V	15.0	25.0	35.0	45.0	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե
4.3	Օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների հետ համագործակցության ծրագրերի իրականացում Հայ գիտնականների ներուժի հմախմբման ծրագրի շրջանակներում, մլն դրամ	-	20.0	30.0	40.0	50.0	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)